

ՍԱՀՄԱՆԱՍԵՐԸ ԳՈՏՈՒ ԶԻՆՇԱՈՍԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Լ. ՅՈՒ. ԱՐԱՄՅԱՆ

Բանակային ծառայությունը զինվորների առջև դնում է բազմաթիվ սոցիալ-հոգեբանական բարդ խնդիրներ: Այն միջանձնային փոխհարաբերությունների բարդ ժամանակաշրջան է և զինվորներից պահանջում է բարձր հոգեբանական, ֆիզիկական պատրաստվածություն: Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները¹, հաճախ ծառայության մեջ ընդգրկված պատանհների ընդհանուր և հոգեբանական պատրաստության մակարդակը չի համապատասխանում ժամանակակից բանակային ծառայության պահանջներին: Մյուս կողմից էլ՝ սահմանափակ գոտում ծառայությունն իր լարվածությամբ, հնարավոր վտանգի առկայությամբ, ցանկացած պահի մարտական գործողությունների ծավալման հավանականությամբ մշտական լարվածության մեջ է պահում զինվորների հոգեկան համակարգը: Այսպիսի պայմաններում հաճախակի պարեկությունները, բանակային խիստ կանոնակարգը, հատկապես նորակոչիկների համար դժվար առաջադրանքների անվերապահ կատարման պահանջը ծառայողների միջև միջանձնային բախումների և անցանկալի միջադեպերի նախապայման են²:

Հաշվի առնելով վերը նշված գործոնները՝ մեր առջև նպատակ ենք դրել հետազոտել սահմանափակ գոտում ծառայող զինվորների սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, հոգեվիճակների դրսևորման առանձնահատկությունները: Նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ ա) ուսումնասիրել սահմանամերձ գոտում զինվորական ծառայությանը բնորոշ առանձնահատկությունները, բ) զինվորների վրա ազդող բազմազան անբարենպաստ գործոնների առկայությունը, գ) բնորոշ հոգեվիճակների դրսևորման յուրահատկությունները, դ) ծառայության պայմաններին հարմարվածության ինքնագնահատականը:

Հետազոտության համակազմում ընդգրկվել են Տավուշի մարզի՝ ծառայության տարբեր ժամկետներում գտնվող 18-ից 23 տարեկան 40 զինծառայողներ (շարքայիններ):

Առաջադրված խնդիրների իրականացման համար կիրառվել են անբարենպաստ գործոնների բացահայտման հարցաթերթիկ, տագնապալիության ուսումնասիրման Սպիրերգեր-Խանհի թեստը, զինվորների անձնական երջանկության և առողջության ինքնագնահատականների որոշման՝ Դեմբո-Ռուբինշտեյնի սանդղակը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը սկսել ենք անբարենպաստ ազդեցությունների քննությամբ: Այսպես՝ ծառայության առաջինից չորրորդ կիսամյակներում գտնվող զինվորները տարբեր անբարենպաստ գործոններ են նշում. առաջին կիսամյակում նորակոչիկներն առանձնացնում են զիջերային պարեկությունները, հին ծառայողների հետ ոչ կանոնակարգային փոխհարաբերություններում միայնակ մնալը, տան, հարազատների նկատմամբ կարողը, բանակային ծառայության (մասնագիտական) հմտությունների պակասը, ռեժիմի հագեցած լինելը, բանակային ծառայության համար իրենց ֆիզիկական պատրաստության ցածր մակարդակը, կրտսեր սպայական կազմի սուբյեկտիվ վերաբերմունքը և այլն:

¹ Տե՛ս В. Ф. Кулакова, Военная психология и педагогика, М., 1998, էջ 384, С. А. Шапиг, Л. Г. Дикая, Деятельность в особых условиях. Компонентный анализ структуры и стратегии адаптации, "Психологический журнал", М., № 1, 1996, էջ 19-34:

² Տե՛ս Մ. Պ. Մկրտումյան, Արտակարգ պայմաններում զինվորների գործելակերպի հոգեբանական պատրաստության համակարգը, Եր., 1998, էջ 37:

Երկրորդ կիսամյակի ծառայության ժամկետում գտնվողներն առանձնացնում են ոչ կանոնակարգային փոխհարաբերությունները, կարոտը հարազատների նկատմամբ, միօրինակ, միապաղաղ կյանքը, անհանգստությունը մերձավորների համար և այլն:

Երրորդ կիսամյակի ծառայողներն առանձնացնում են շփման, հաղորդակցման, տեղեկատվական, մշակութային բնույթի գործոնների պակասը, հարազատների և քաղաքացիական կյանքի նկատմամբ կարոտը և այլ դժվարություններ:

Ծառայության ժամկետի վերջին՝ չորրորդ կիսամյակում գտնվող զինվորներն առանձնացնում են բանակային կյանքի միօրինակությունը, զորացրումից հետո քաղաքացիական կյանքին իրենց անպատրաստությունը (մասնագիտության բացակայությունը գործազրկության վտանգը, անորոշությունը և այլն), ծառայության ժամկետի երկարացման վերաբերյալ շշուկները և այլն:

Ակնհայտ է, որ ծառայության տարբեր ժամկետներում գտնվող զինվորների առանձնացրած բացասական գործոնների մեջ աչքի են ընկնում սոցիալ-հոգեբանական և ֆիզիկական բնույթի դժվարությունները: Հատկապես առաջին տարվա ծառայողների թվարկած նշանակալի բացասական գործոնների բազմազանությունը և նրանց կարևորությունը խոսում են զինվորականների ընդհանուր (ֆիզիկական, տեխնիկական, բարոյահոգեբանական) և հատուկ զինվորական ծառայության պատրաստության ցածր մակարդակի մասին:

Կատարված դիտարկումներից ու ապայական անձնակազմից ստացած տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ ծառայությանը նախորդող ժամանակաշրջանում պատանհանների հետ տարվող բարոյահոգեբանական, ֆիզիկական, հայրենասիրական աշխատանքները գտնվում են ցածր մակարդակի վրա:

Բանակում հայտնված նորակոչիկները հաճախ զորակոչվում են պարտադրանքով, բանակային ծառայությունը համարում են ավելորդ, իրենց չվերաբերող: Ծատերը պատրաստ են դիմել ցանկացած միջոցի՝ բանակային ծառայությունից խուսափելու համար: Այս փաստը զինակոչյն իրականացնող և օժանդակող կազմակերպություններին մտածելու տեղիք է տալիս: Կարծում ենք՝ այս հարցում իրենց անելիքներն ունեն հատկապես ընտանիքը և դպրոցը, որոնք արժեքային համակարգերի նկատմամբ դրական վերաբերմունքի, դիրքորոշումների ձևավորման հիմնական միջավայրն են: Բանակային ծառայության նկատմամբ բացասական դիրքորոշումն ամբողջ ծառայության ընթացքում ուղեբորից կախված ծանր կշռաքարերի նման դժվարացնում է զինվորի կյանքը՝ հնարավորություն չտալով նրան հեշտությանը հարմարվել: Վերջին տարիներին բարոյահոգեբանական արժեքների նկատմամբ ազգաբնակչության առանձին շերտերում ձևավորված բացասական դիրքորոշման, հոռեռեսակյան տրամադրությունների հետևանքով ստեղծվել է մի իրավիճակ, երբ հայրենիքը, ժողովուրդը, բանակը, զինանիշը, եռագույնը, պետությունը ասես դարձել են հասարակ անուններ, երկրորդական հասկացություններ: Նման մարդկանց գիտակցության մեջ արմատանում են արտասահմանում ապրելու ձգտումն ու գաղափարը: Մարդիկ անում են ամեն հնարավորը, որպեսզի հեռանան հայրենիքից: Այս հանգամանքը կարող է բացասաբար անդրադառնալ պատանհանների բանակային ծառայության պատրաստվելու, հայրենիքին նեցուկ լինելու, իրենց ավանդյն ընդհանուր գործին ներդնելու գաղափարների, ծառայությանն ուղղված դրական դիրքորոշումների ձևավորման գործընթացի վրա: Մյուս կողմից էլ պատանհանների սոցիալ-տնտեսական, կենցաղային, ամենօրյա դժվարությունները, իրենց տեղն ապագայում չգտնելու անհանգստությունը նրանց մեջ առաջ են բերում ներքին հակամարտություններ, որոնք բանակային ծառայության ժամանակ ինքնահաստատման գործընթացում դրսևորվում են ամենատարբեր ոչ կանոնակարգային փոխհարաբերությունների տեսքով:

Բացասական գործոնների ազդեցության այսպիսի բազմազանության ֆոնի վրա հետազոտվել են զինվորների հոգեվիճակների դրսևորման առանձնահատկությունները: Տագնապի, անհանգստության, լարվածության բարձր ցուցանիշներ են գրանցվում հատկապես ծառայության առաջին ամիսներին: Ջինվորների շրջանում բացահայտված տագնապը, անհանգստությունը, արտահայտված սթրեսն ու վախը հաճախ զուգակցվում են օրգանիզմի ֆիզիոլոգիական փոփոխություններով, որոնք դրսևորվում են բաշի անկմամբ, մարսողական համակարգի, գիշերային քնի խանգարմամբ, ընդհանուր հոգանածությանը, վերջույթներում ծանրության և ջարդվածության զգացմամբ և այլն:

Երկրորդ կիսամյակում տագնապալիության մակարդակն իջնում է, սակայն պահպանվում են ընդհանուր լարվածությունն ու վախը: Առանձին դեպքերում դիտարկվում են սթրեսի և ներտոսիկ վիճակների ռեակցիաներ:

Երրորդ կիսամյակում հոգեվիճակների դրսևորման հաճախականությունն ու մակարդակն իջնում են, սակայն դրանք բարձր են թեստի պահանջների միջին մակարդակից, որը նույնպես անձի համար նպաստավոր հոգեվիճակ չէ: Նկատվում են լարվածության, համատարած կարտոսի, թախիծի, դժգոհության, ներքին թաքցված բողոքի ռեակցիաներ: Ներխմբային փոխհարաբերություններում դրսևորվում են հակամարտություններ, դժգոհություններ, բանակին և ծառայությանն ուղղված ամեն ինչի մերժում:

Ծառայության վերջին՝ չորրորդ կիսամյակում գտնվողները ցուցաբերում են տագնապի, անհանգստության, դժգոհության նշաններ, սակայն առանձին անձանց շրջանում դրանց մակարդակը թեստի պահանջներից բարձր է:

Առաջին կիսամյակում ընդհանուր առողջության ինքնագնահատականները գրանցվում են թեստի սանդղակի միջին և դրանից ցածր՝ -2, -3 բազային միավորների սահմանում: Երկրորդ և երրորդ կիսամյակներում ինքնագնահատականի ցուցանիշներն աստիճանաբար բարձրանում են մինչև սանդղակի միջին և միջինից բարձր՝ +1, +2 բազային միավորների մակարդակը և պահպանվում մինչև ծառայության չորրորդ կիսամյակը:

Երջանկության ինքնագնահատականները հետազոտվող բոլոր խմբերում նշվում են թեստի սանդղակի միջին և դրանից բարձր մակարդակներում (+1, +2): Հավանաբար դա պայմանավորված է ծառայողների պատանեկան տարիքի ռոմանտիկայով, բանակային կյանքին հարմարման գործընթացի հետ կապված՝ ձևավորվող լավատեսական դիրքորոշումներով, նրանց անձի ինքնահաստատման կայուն մոտիվացիոն համակարգով և այլն:

Ինչպես տեսնում ենք, զինծառայողների գերակշռող բացասական հոգեվիճակների առկայության բազմամագնությունը, առողջության ցածր ինքնագնահատականները, զինվորական գործունեության առանձնահատուկ դժվարություններն ու բացասական գործոնների բազմագնությունը նպաստավոր պայման չեն բանակային ծառայության համար: Մյուս կողմից էլ երջանկության ինքնագնահատականի հուսադյուր ցուցանիշները պայմանավորված են սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացով, որը հնարավորություն է տալիս զինվորներին իրենց վրա դրված պարտականությունները կատարել ինքնուրույն, ստեղծագործաբար, հոժարակամ, պարտքի զգացումից մղված, անշուշտ՝ նաև զինվորական պարտադիր ծառայության պահանջներից ելնելով: Հետևաբար՝ գործունեության արդյունավետությունը, պարտքից, պատասխանատվությունից բխող ակտիվությունը կախված է բանակային ծառայության նկատմամբ նրանց դրական դիրքորոշման ձևավորման և սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի, ինչպես նաև նրանց ընդհանուր պատրաստության աստիճանական անից:

Կարծում ենք, որ սահմանամերձ գոտու զինվորական ծառայության ժամանակ առաջացող արտակարգ դեպքերը, միջանձնային փոխհարաբերություններում ծագող հակամարտությունները, բանակային ծառայությանը, դժվար պայմաններին հարմարվելու նրանց պատրաստակամությունը զինակոչիկների ընդհանուր ֆիզիկական և բարոյահոգեբանական պատրաստվածության ցածր մակարդակը պայմանավորված են մինչև զինակոչն ընկած ժամանակում պատանիների ընդհանուր պատրաստության ցածր մակարդակով: Ընդհանուր և հատուկ հոգեբանական պատրաստության ցածր մակարդակը բացասական հոգեվիճակների առաջացման, ինչպես նաև ոչ կանոնակարգային փոխհարաբերություններում անցանկալի հակամարտությու նների և այլ բացասական երևույթների դրսևորման հիմնական պայմանն է: Բանակը արտաքին թշնամիներից ժողովրդի, պետության, մշակութային, պատմական արժեքների պահպանման միակ ուժն է: Իսկ բանակի ուժն ու հնարավորությունները պայմանավորված են մարդկային գործունով: Այսօրվա բանակին անհրաժեշտ են ոչ միայն ժամանակակից ռազմական տեխնիկա, այլև բարձր բարոյահոգեբանական, ֆիզիկական և մտավոր հատկանիշներով օժտված զինվորներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

1. Ջորակոչվող զինվորների բարոյահոգեբանական, ֆիզիկական պատրաստու-

թյունը չի համապատասխանում սահմանամերձ գոտում զինվորական ծառայության պահանջներին:

2. Սահմանամերձ գոտում զինվորական ծառայության մեջ գտնվող բանակայինները մշտական լարվածության, տագնապի և այլ անբարենպաստ հոգեվիճակների պայմաններում են: Զորակոչված զինվորների ծառայության առաջին նախապատրաստական ամիսը պետք է ունենա զորատեսակին և սահմանամերձ գոտու ծառայության պահանջներին համապատասխան հոգեբանական պատրաստության ուղղվածություն: Աշխատանքներում պետք է ներառվեն զինակոչիկների ընտրության, անհատական առանձնահատկությունների, ընդհանուր ֆիզիկական պատրաստության, բանակային ծառայությանն ուղղված հիմնական դրդապատճառների բացահայտման և նրանց հաշվառման հիմնահարցերը:

3. Ծառայողների առողջության, երջանկության ինքնագնահատականները և զինվորական գործունեության արդյունավետության բարձրացումը պահանջում են ընտանեկան միջավայրի, ավանդական արժեքների վերանայում, դաստիարակության նորմերի կիրառման անհատական մոտեցում, դպրոցական ուսուցման ծրագրերում հայրենիքի սահմանների, բանակի, ընդհանրապես ազգային արժեքների նկատմամբ նորովի մոտեցում, ազգային բանակի նկատմամբ դրական վերաբերմունքի և դիրքորոշման ձևավորման ուղղությամբ կոնկրետ տեսական և կիրառական աշխատանքների իրականացում:

4. Սահմանամերձ գոտում բանակային ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ անհրաժեշտ է նորակոչիկների հետ տարվող նախապատրաստական աշխատանքներում ընդգրկել հոգեբանական պատրաստության պարապմունքներ: Անհրաժեշտ է բանակում ստեղծել ստացիոնար «հոգեբանական ծառայություն», որն իր վրա կվերցնի ինչպես հարմարման, այնպես էլ միջանձնային փոխհարաբերություններում ոչ կանոնակարգային գործողությունների կանխարգելման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացումը:

Л. Ю. АРАМЯН - Социально-психологические проблемы военной службы в приграничной зоне. - Военная служба ставит перед солдатом целый ряд сложных социально-психологических проблем. Исследуя эти проблемы, автор статьи приходит к следующим выводам.

1. Психологическая и физическая подготовленность призывника не соответствует требованиям, выдвигаемым службой в приграничной зоне.

2. Служба в приграничной зоне связана с постоянным нервным напряжением, психологическими перегрузками. Поэтому в течение первого, подготовительного месяца службы с призывником должна проводиться работа, выявляющая его физическое состояние, индивидуальные особенности психики, его мотивы службы.

3. Для повышения эффективности военной службы, для улучшения самочувствия и самооценки военнослужащего необходимы совместные усилия семьи, школы, всего общества, направленные на выработку правильных патриотических ориентиров, новых взглядов на национальные ценности, на роль национальной армии.

4. Исходя из особенностей службы в приграничной зоне, необходимо проводить с призывниками занятия по психологической подготовке, а в самой армии следует создать постоянно действующую психологическую службу.